ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«Հրազդանի Խ.Աբովյանի անվ. թիվ 1 ավագ դպրոց» ՊՈԱԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2023

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ Ուսուցչի դերը սովորողի մասնագիտական կողմնորոշման գործընթացում

Կատարող՝ Գոհար Գևորգյան

Առարկա՝ Քիմիա

Ուսումնական հաստատություն՝ ՀՀ ԿԳՄՍՆ Հրազդանի Հովսեփ Օրբելու անվան թիվ 13 ավագ դպրոց

ՀՐԱԶԴԱՆ 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1.	ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ	3
2.	ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ	4
3.	ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ	5
4.	ԱԿՆԿԱԼՎՈՂ ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ	6
5.	ԾՆՈՂՆԵՐԻ ԵՎ ՄԱՆԿԱՎԱՐԺՆԵՐԻ ԴԵՐԸ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ	9
6.	ՀՀ- Ի ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ	11
7.	ԵՎՐՈՊԱԿԱՆ 8 ՀԻՄՆԱԿԱՆ ԿԱՐՈՂՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ (ԿՈՄՊԵՏԵՆՑԻԱՆԵՐԸ)	13
8.	ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ	17
9.	ԵԶՐԱԿԱՈՒԹՅՈՒՆ	18
10.	ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ	19

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հանրակրթական դպրոցում մանկավարժական աշխատանքի կարևոր բաղադրիչ է մասնագիտական կողմնորոշումը: Սովորողին մասնագիտության ընտրության հարցում տեղեկատվությունն ու խորհրդատվությունը նպատակ ունեն ոչ միայն օգնելու նրան կազմակերպել իր մասնագիտական կրթության և ուսուցման գործընթացը (երբ նա դպրոցում գիտակցված ուսումնասիրում է այնպիսի առարկաներ, որոնք կարող են նրան օգտակար լինել արդեն հասուն տարիքում, աշխատանքային միջավայրում), այլ նաև սոցիալ- հոգեբանական տեսանկյունից վստահություն հաղորդելու աշակերտին իր ապագայի նկատմամբ: Մասնագիտության ընտրությունը բարդ, բայց և շատ կարևոր խնդիր է: Հաճախ սովորողի համար դժվար է լինում օբյեկտիվ գնահատել իր հնարավորություններն ու կարողությունները, դրանք համադրել աշխատաշուկայի կանխատեսվող պահանջարկի հետ: Կարևոր է նաև, որ մասնագիտության, ուսումնական հաստատության և հետագա աշխատանքային գործունեության ոլորտի ընտրությունը կատարվի ոչ միայն ազատ, ինքնուրույն, այլ նաև բացառապես գիտակցաբար: Մասնագիտության ընտրությունն արդի հասարակության մեջ գնալով դառնում է ավելի դժվար խնդիր: Մեր օրերում, երբ արագ զարգացող տեխնոլոգիաները թելադրում են տնտեսությանը նոր ուղղություններ, դժվարանում է աշխատաշուկայի կանխատեսումը հատկապես միջնաժամկետ եւ երկարաժամկետ հատվածում, փոխվում են հասարակության պահանջմունքները, նոր սերնդի արժեքները, մասնագիտության եւ կարիերայի ընտրությունը պահանջում է հետևողականություն, պլանավորում, գնահատում և, միգուցե, ժամանակի ընթացքում նոր նպատակների սահմանում: Այս պայմաններում բացի տեղեկացվածությունից, կարևորվում են նաև սովորողի առանցքային/համընդհանուր կարողությունները: Մի կողմից, մասնագիտական առաջընթացի պլանավորումը յուրաքանչյուր անձի անձնական խնդիրն է, մյուս կողմից՝ անձը հասարակության մի մասն է, ով աշխատանքի միջոցով իր արտադրողականությամբ նպաստ ունի տվյալ համայնքի ու երկրի տնտեսության վրա: Մասնագիտության գիտակցված ընտրությամբ անձը դրսևորում է սոցիալական եւ տնտեսական ակտիվություն, գործնական պատրաստվածություն, ընդհանուր

առմամբ՝ անհատական դիրքորոշում կյանքում: Համայնքի և աշխատաշուկայի տեսանկյունից յուրաքանչյուր դեռահասի մասնագիտության գիտակցված ընտրությունից կախված է ազգային տնտեսության մեջ աշխատանքի արտադրողականությունը, մտավոր ներուժի օգտագործման արդյունավետությունը, ներքին և արտաքին միգրացիայի ու կադրերի հոսքի ծավալները և այն:

Այս պարագայում պետք է շեշտադրել եւ կարևորել ուսումնադաստիարակչական գործընթացում ուսուցչի կողմից իրականացվող աշխատանքի մեթոդաբանությունը, ինչը պետք է զարգանա եւ լրացվի արդեն առարկայական կամ միջառարկայական կապերի միջոցով անցկացվող աշխատանքով: Գործընթացի հիմքում անձնային որակների, նախասիրությունների, հետաքրքրությունների բացահայտումն է և առանցքային կոմպետենցիաների զարգացումը, տեղեկատվության փոխանցումը, մասնագիտությունների մասին ճանաչելիությունը, թե տարբեր առարկաներ ինչ նշանակություն ունեն այս կամ այն մասնագիտության և զբաղմունքի տեսանկյունից:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ

- Աշխարհում գոյություն ունեցող մասնագիտությունների մասին սովորողներին ընդհանրական գիտելիքների զարգացումն է:
- Մասնագիտություն ընտրելու անհրաժեշտության գիտակցության ձևավորումն ու անհրաժեշտ տեղեկատվություն ձեռք բերելու աղբյուրների, քայլերի հաջորդականության ներկայացումը:
- Սովորողներին իրենց անձը ճանաչելու համար անհրաժեշտ գիտելիքների հաղորդումն է, համապատասխան մեթոդների ու մեթոդիկաների կիրառման կարողությունների ձևավորումը:
- Մարդու կյանքում, հատկապես մասնագիտության ընտրության գործում անհատական հոգեբանական առանձնահատկությունների դերի բացահայտումն ու համապատասխան մեթոդների ու մեթոդիկաների (ոչ խորը գիտական) կիրառման կարողությունների ձևավորումն է:
- Սովորողների՝ կյանքի անցած տարիներն իմաստավորելու, գնահատելու և հետագա պլանները կառուցելու, ժամանակը պլանավորելու, անելիքներն արդյունավետ նախագծելու կարողությունների ձևավորումն է:

- Սովորողներին ՀՀ մասնագիտական կրթության համակարգին, համապատասխան օրենսդրությանը, մասնագիտականուսումնական հաստատություններին ծանոթացումն ու ուսումնական հաստատության, կրթական ծրագրի և աշխատաշուկայի մասին տեղեկատվություն ստանալու կարողությունների ձևավորումն է:
- Մասնագիտական կողմնորոշման և կարիերայի պլանավորման գործընթացում սովորողներին անհրաժեշտ անձնային որակների, համագործակցային կարողությունների ու սոցիալական հմտությունների ձևավորումն է:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

- Ձևավորել ընդհանրական պատկերացումներ աշխարհում գոյություն ունեցող մասնագիտությունների մասին,
- հաղորդել մարդու կյանքում մասնագիտությունների դերի մասին գիտելիքներ,
- ձևավորել մասնագիտության ընտրության համար անհրաժեշտ տեղեկատվություն ձեռք բերելու կարողություններ:
- ներկայացնել <<ես>>-ի բացահայտման, ինքնաճանաչման կարևորությունը անձի կյանքում,
- ձևավորել ինքնաճանաչման մեթոդների կիրառման նախնական կարողություններ,
- ներկայացնել հետաքրքրությունների ու նախասիրությունների էությունը,
- բացահայտել սովորողների հետաքրքրություններն ու նախասիրությունները,
- իրականացնել համապատասխան խորհրդատվություն, թե ինչպես օգտագործել նախընտրելի առարկաներից ստացված գիտելիքները հետագայում մասնագիտության ընտրությանը նախապատրաստելիս,
- ձևավորել ադեկվատ <<ես>>-կերպարի կառուցման, սեփական անձի մասին խմբի կարծիքն ընդունելու կարողություններ:
- ներկայացնել անհատական հոգեբանամանկավարժական առանձնահատկությունները, դրանց դերը մարդու կյանքում, հատկապես՝ մասնագիտության ընտրության գործում,

- դիագնոստիկ էլեկտրոնային մեթոդիկաներով բացահայտել սովորողների հոգեբանամանկավարժական մի քանի առանձնահատկություններ, որոնք հիմք կդառնան մասնագիտության ընտրության համար,
- ձևավորել այդ մեթոդներն ու մեթոդիկաները (ոչ խորը գիտական) ինքնուրույն կիրառելու կարողություններ,
- ներկայացնել հաջողակ դառնալու համար մարդուն անհրաժեշտ անձնային հիմնական որակները:
- ձևավորել կյանքի անցած տարիները, ձեռքբերումներն ու բացթողումները գնահատելու, իմաստավորելու կարողություն,
- ձևավորել հետագա տարիները, անելիքները, կյանքի ուղին արդյունավետ պլանավորելու կարողություն,
- ձևավորել ժամանակի ընկալման և այն արդյունավետ պլանավորելու կարողություն:
- ծանոթացնել ՀՀ մասնագիտական կրթության համակարգին, համապատասխան օրենսդրությանը, մասնագիտական ուսումնական հաստատություններին և աշխատաշուկային,
- ձևավորել հետագա մասնագիտության ընտրության գործում այդ գիտելիքների արդյունավետ օգտագործման կարողություններ,
- մասնագիտություն ստանալու ուղիներին,
- ձևավորել ուսումնական հաստատության, կրթական ծրագրի և աշխատաշուկայի մասին տեղեկատվություն ստանալու կարողություններ:
- ծանոթացնել արդյունավետ թիմային աշխատանք կատարելու, սեփական հույզերը, զգացմունքներն ու վարքը կառավարելու, համոզման, զրույցի վարման կանոններին, սկզբունքներին,ձևերին,
- ձևավորել համագործակցային, համատեղ գործողությունների կատարման, սեփական հույզերը, զգացմունքներն ու վարքը կառավարելու, կոնֆլիկտի կանխարգելման, հաղթահարման նախնական կարողություններ, հմտություններ, մարդկանց համոզելու հոգեբանական հնարներ,
- հաղորդել գիտելիքներ լիդերության, լիդերին բնորոշ հիմանական որակների, կոնֆլիկտի տեսակների, լուծման ռազմավարությունների մասին,
- ձևավորել ձեռներեցության, ձեռներեց վարքագծի և ձեռնարկատիրական գործունեության մասին ընդհանուր պատկերացումներ:

ԱԿՆԿԱԼՎՈՂ ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

ՍՈՎՈՐՈՂԸ		
ԻՄԱՆԱ	ԿԱՐՈՂԱՆԱ	ՏԻՐԱՊԵՏԻ
❖ աշխարհում տարածված մասնագիտությունները, <<մասնագիտություն>>, <<զբաղմունք>>, <<աշխատանք>> հասկացությունների տարբերությունները: ❖ նախասիրությունների ու հետաքրքրությունների էությունը, դրանց դերը անձի կյանքում, <<ես>>-կերպարի, հոգեբանական դիմանկարի բաղադրիչները, կազմման առանձնահատկությունները: ❖ անձի հոգեբանամանկավարժական առանձնահատկություն	❖ հասկանալ և ներկայացնել, թե ինչ դեր ունեն մասնագիտությունները մարդկության համար: ❖ հիմնավորել անձի կյանքում ինքնաճանաչման կարևորությունը, օգտագործել ուսումնական առարկաներից ստացված գիտելիքներն իր հետագա մասնագիտության ընտրությանը նախապատրաստվելիս, լսել և ընդունել իր մասին խմբի կարծիքը: ❖ ճիշտ կողմնորոշվել	❖ մասնագիտությունների աշխարհի մասին տեղեկատվություն ձեռք բերելու կարողությունների ն: ❖ ինքնաճանաչման պարզ մեթոդների կիրառման կարողությունների ն: ❖ հոգեբանական առանձնահատկությունների բացահայտման պարզ մեթոդիկաների կիրառման հնարներին: ❖ ժամանակը և հետագա անելիքները արդյունավետորեն պլանավորելու կարողությունների

ները, դրանց բնութագիրը, կոնկրետ մասնագիտություններին համապատասխան և ընդհանրապես, հաջողակ դառնալու անձնային հիմնական որակները: ❖ ժամանակի ընկալման առանձնահատկությունները,թե ինչու է անհրաժեշտ գնահատել, իմաստավորել կյանքի անցած տարիները: ❖ ՀՀ մասնագիտական կրթության համակարգի առանձնահատկությունները, համապատասխան օրենսդրության ընդհանուր դրույթները, մասնագիտական ուսումնական հաստատությունները, աշխատաշուկայի առանձնահատկությունները, արտերկրում կրթություն ստանալու հնարավորությունները:	ժամանակի մեջ, վերլուծել, գնահատել իր կյանքը, պլանավորել ապագա գործողությունները, հատկապես՝ մասնագիտության ընտրության տեսանկյունից: ❖ օգտվել համապատասխան փաստաթղթերից, տեղեկատվություն ձեռք բերի ՀՀ մասնագիտական կրթության ոլորտի և աշխատաշուկայի վերաբերյալ, գտնել հավաստի տեղեկատվություն արտերկրում ուսումնառությունը շարունակելու համար: ❖ արդյունավետորեն	❖ հետագա մասնագիտության ընտրության ❖ գործում ստացած գիտելիքներն արդյունավետ օգտագործելու, մասնագիտական ուսումնական հաստատության, կրթական ծրագրի և աշխատաշուկայի մասին տեղեկատվություն ստանալու աղբյուրներից ինքնուրույն օգտվելու կարողությունների: ❖ համատեղ գործունեություն իրականացնելու, համագործակցային, սեփական հույզերը, վարքը կառավարելու, կոնֆլիկտի կանխարգելման, հաղթահարման,

❖ թիմ հասկացությունը, թիմային աշխատանքի կանոնները,հույզերի, զգացմունքների դրսևորման օրինաչափությունները, ձևերը, ով է լիդերը, լիդերների տեսակները և հիմնական բնորոշ հատկությունները, կոնֆլիկտի տեսակները, լուծման ռազմավարությունները, համոզման, զրույցի վարման կանոնները, սկզբունքները:	համագործակցել թիմի մյուս անդամների հետ, կանխատեսել հույզերի դրսևորման հնարավոր վտանգները, ազդեցությունը վարքի վրա, ճիշտ կիրառել զրույցի վարման կանոնները, հնարները, տարբերակել և բնութագրել ձեռներեց մարդու հատկանիշները:	մարդկանց համոզելու մեթոդների կիրառման նախնական կարողությունների ն, լիդերին բնորոշ հատկանիշների զարգացման որոշ մեթոդիկաներին, ձեռնարկատիրական գործունեությանն առնչվող տարրական գիտելիքներին:

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԾՆՈՂՆԵՐԻ ԵՎ ՄԱՆԿԱՎԱՐԺՆԵՐԻ ԴԵՐԸ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ

Մասնագիտական կողմնորոշման գործընթացում մեր հասարակության մեջ շարունակում է ամենամեծ ազդեցությունն ունենալ ընտանիքը, մասնավորապես՝ ծնողները: Ընտանիքն է երեխայի մեջ հիմք դնում այն հիմնարար արժեքներին, որոնցով էլ հետագայում պայմանավորվում է անձի վարքը, դիրքորոշումները հասարակական հարաբերություններում: Վերջիններս էլ անմիջականորեն ազդում են անձի մասնագիտական կողմնորոշման և կարիերայի պլանավորման գործընթացների վրա: Իհարկե, այստեղ պետք է նշել, որ ծնողներից բացի կարեւոր ազդեցություն այդ գործընթացներում ունենում են մանկավարժները, որոնք շատ դեպքերում դառնում են աշակերտների համար նմանակման, ընդօրինակման օբյեկտներ:

Անձի սոցիալականացման կարևորագույն գործոն է ծնողների կողմից իրենց երեխաների ապագային ուղղված պլանավորումը: Հետինդրուստրալ հասարակությունում ծնողներն ու երեխաները սերտորեն կապված են միմյանց ընդհանուր կենցաղավարությամբ:

Ոչ ոք չի կարող ժխտել այն հանգամանքը, որ հասարակության զարգացման ժամանակակից փուլում առավել քան կարևորվում է մանկավարժի դերը անձի զարգացման գործընթացում:

Մեծ է ուսուցիչների դերը, որոնք մեծ ներազդեցություն ունեն աշակերտի անձի կայացման, մասնագիտական ընտրության, և, առհասարակ, աշակերտի՝ որպես հասարակության ապագա լիարժեք անդամի:

Երեխայի անհատականության զարգացումը, նրա ունակությունների բացահայտումը, հնարավորությունների, հետաքրքրությունների պաշտպանությունը, ինչպես ցույց է տալիս

պրակտիկան, լավագույնը կատարվում է ուսուցիչներիների կողմից:

Ուսուցիչը հաշվի առնելով երեխաների հետաքրքրությունները, հակումները և պահանջմունքները, կարող է ապահովել նրանց համար այնպիսի պայմաններ, որոնցում նրանք կկարողանան ստեղծել իրենց մասնագիտական հետաքրքրություններին ու

նախասիրություններին համապատասխան միջավայր:

Ուսուցիչը կարող է ոչ միայն ազդել դեռահասի մասնագիտական ընտրության վրա, այլև առաջացնել հետաքրքրություն՝ մոտիվացիա այս կամ այն ոլորտի նկատմամբ, ինչպես

նաեւ սեփական մասնագիտական հավակնությունները ճիշտ գնահատելու համար:

Սովորողների հետ աշխատանքում ուսուցրի գործունեության մեջ կարելի է պայմանականորեն առանձնացնել 2 ուղղություն՝

• ուսումնադաստիրակչական աշխատանքներ,

• մասնագիտական կողմնորոշման աշխատանքներ:

Հիմնական դպրոցն ավարտելու շրջափուլում սովորողը կանգնում է մասնագիտական ընտրության առջև, քանի որ այս փուլում նա ունի երկընտրանք՝ շարունակել հանրակրությունը, թե ստանալ նախնական կամ միջին մասնագիտական կրթություն:

Այս պարագայում, ուսուցչի աջակցությունը դրսևորվում է գործունեության հետեւյալ մակարդկներում.

1. Տրամադրել խորհրդատվություն եւ կատարել ուղղորդումներ, որպեսզի սովորողը չհետևի <<հանրության ընտրությանը>>-ը և չկատարի ընտրություն, <<որտեղ բոլորը՝ այնտեղ էլ ես>>

սկզբունքով: Այդ պարագայում ընտրությունը իմաստավորված չէ, և ուսուցչիի գլխավոր խնդիրն է նպաստել, որ սովորողը ինքը կատարի իր ընտրությունը:

2. Սովորողը ընտրություն է կատարում՝ ելնելով մասնագիտությունների<< մոդայիկ>> լինելու հանգամանքից, որը հաճախ կարող է դրսևորվել նրանով, որ ֆինանսական առումով, այն ավելի եկամտաբեր է: Ուսուցչիի խնդիրը այդ պարագայում նրանում է, որ նա կարողանա վերլուծել սովորողի կողմից կատարվող ընտրությունը՝ հաշվի առնվե՞լ է արդյոք երեխայի կողմից սեփական ֆիզիկական, մտավոր, սոցիալական, հաղորդակցական ունակությունները մասնագիտություն ընտրելիս:

3. << Պարտադրված ընտրություն>>, երբ սովորողի ընտրությունը պայմանավորված է այլ օբյեկտիվ պատճառներով, օրինակ՝ ֆինանսական աղբյուրների բացակայությամբ կամ, որ

առավել տարածված է ծնողների կողմից, երեխայի փոխարեն մասնագիտության ընտրությամբ: Այս պարագայումուսուցիչը աշխատում է եւ՛ երեխայի, եւ՛ նրա ծնողների հետ:

4. <<Չկողմնորոշված ընտրություն>>՝ սովորողի համար միևնույն է՝ որտեղ եւ ինչ մասնագիտությամբ նա կուսումնառի: Այս պարագայում ուսուցչի գլխավոր առաքելությունը անձի կյանքի որակի ու, առհասարակ, կյանքի համար աշխատանքի, մասնագիտության կարեւորությունը բացահայտելն է:Այստեղ առավել կարեւոր է երեխայի մեջ սերմանել հարգանք նախընտրածմասնագիտությունների նկատմամբ:

ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՍՏԱՆԱԼՈՒ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ



ՀՀ- Ի ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ: ՀՀ-ՈՒՄ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Սովորողներին ծանոթացրել եմ ՀՀ-ում կրթության համակարգի եւ նախընտրելի մասնագիտությամբ կրթություն ստանալու հնարավորությունների հետ:
ՀՀ կրթության համակարգը կրթության հաջորդականությունն ապահովող տարբեր մակարդակի ու ուղղվածության կրթական ծրագրերի, ուսումնական հաստատությունների եւ կրթության կառավարման մարմինների փոխկապակցված ամբողջություն է:

ՀՀ կրթության համակարգը ներառում է.

1. նախադպրոցական կրթությունը,

2. ընդհանուր միջնակարգ կրթությունը՝ կազմված տարրական,միջին կամ հիմնական եւ ավագ դպրոցից,

3. նախնական մասնագիտական, միջին մասնագիտական և բարձրագույն կրթությունը,

4. հետբուհական կրթությունը,

5. մասնագետների վերաորակավորման և որակավորման բարձրացման հաստատությունները,

6. գնահատման եւ կրթական ծառայություններ առաջարկող հաստատությունները:

Մասնագիտական հիմնական կրթական ծրագրերն են՝

1. նախնական մասնագիտական (արհեստագործական) ,

2. միջին մասնագիտական,

3. բարձրագույն մասնագիտական,

4. հետբուհական մասնագիտական:



CS Сканировано с CamScanner

Ուսուցչի դերը մասնագիտության ուղղորդման մեջ միշտ մնում է առանցքային: Ուսուցիչը կարողանում է ուղղորդել աշակերտին, օգնել նրան կողմնորոշվել տեղեկատվական հոսքի մեջ և ընդգծել անձամբ իր համար ամենաօգտակարն ու արդիականը:

ԵՎՐՈՊԱԿԱՆ 8 ՀԻՄՆԱԿԱՆ ԿԱՐՈՂՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ (ԿՈՄՊԵՏԵՆՑԻԱՆԵՐԸ)

Սովորողներին իրազեկել եմ , որ մրցունակ մասնագետ դառնալու համար շատ կարևոր է որոշակի որակների և հմտությունների տիրապետելը: Աշխատաշուկայում

առանձնացվում են Եվրոպական միության կողմից սահմանված 8 հիմնական կարողունակություններ, որոնք պետք է ունենա մրցունակ մասնագետը:

Եվրոպական 8 հիմնական կարողունակությունները (կոմպետենցիաները).

1. մայրենի լեզվով հաղորդակցում,
2. օտար լեզվով հաղորդակցում,
3. մաթեմատիկական գրագիտություն եւ տարրական կարողություններ գիտության եւ տեխնոլոգիայի ոլորտում,
4. թվային տեխնոլոգիաների տիրապետում,
5. սովորել սովորել,
6. հասարակական եւ քաղաքացիական կարողություններ,
7. ձեռներեցություն,
8. մշակութային իրազեկվածություն եւ ինքնադրսևորում:

1**. Մայրենի լեզվով հաղորդակցում**

Մայրենի լեզվով հաղորդակցումը պահանջում է մտքերը, զգացմունքները, փաստերը, կարծիքները բանավոր և գրավոր արտահայտելու (լսել, խոսել, կարդալ, գրել) և մեկնաբանելու

կարողություն, մշակութային և հասարակական երեւույթների ազատ մեկնաբանում կրթության եւ աշխատանքի ընթացքում, ինչպես նաեւ միջանձնային հարաբերություններում:

Մայրենի լեզվով հաղորդակցումը, որը եվրոպական ութ կարողություններից առաջինն է, սեփական խոսքը մեկնաբանելու և սեփական մտքերն արտահայտելու կարողությունն է: Այն

անձից պահանջում է բառապաշարի եւ լեզվի քերականական առանձնահատկությունների իմացություն, ներառում է խոսքի հիմնական ոճերի և դրանց կիրառման վերաբերյալ իրազեկվածություն, ինչպես նաև դրանց ճիշտ կիրառումը հաղորդակցման գործընթացում: Մայրենի լեզվով հաղորդակցման հիմնախնդիրներից մեկը քննադատական և կառուցողական

երկխոսության իրականացումն է:

2. **Օտար լեզվով հաղորդակցում**

Օտար լեզվով հաղորդակցման կարողությունները եւ գիտելիքները պետք է բավարար լինեն զգացմունքները, մտքերը, կարծիքները և փաստերը հասկանալու եւ արտահայտելու համար ինչպես բանավոր, այնպես էլ գրավոր՝ համարժեք

հասարակական և մշակութային համատեքստին (աշխատավայրում, տանը, հանգստավայրում): Օտար լեզվով հաղորդակցումը ենթադրում է միջմշակութային առանձնահատկությունների տարբերակման
հմտություն: Անձը պետք է կարողանա հասկանալ հաղորդողի՝օտար լեզվով շարադրած բոլոր մտքերը եւ դրանց համապատասխան արձագանքել:

3. **Մաթեմատիկական գրագիտություն եւ տարրական կարողություններ գիտության եւ տեխնոլոգիայի ոլորտում**

Մաթեմատիկական գրագիտությունը պահանջում է կյանքի տարբեր իրավիճակներում մաթեմատիկական մտածողության կիրառում՝ տարաբնույթ խնդիրներ լուծելու համար:
Գիտության եւ տեխնոլոգիայի ոլորտում կարողությունները պահանջում են գիտելիքների եւ մեթոդների կիրառում, որոնք բացահայտում են բնությունը, աշխարհը: Դրանք ներառում
են մարդու գործունեության արդյունքում առաջացած փոփոխությունների ընկալումը եւ յուրաքանչյուր անհատի՝ որպես հասարակության անդամի ունեցած պատասխանատվությունը: Մաթեմատիկական գիտելիքների առկայության դեպքում պետք
է մաթեմատիկական բազային գործողությունների կիրառում առօրյա կյանքում, աշխատանքում, տանը, փաստարկների եւ հնարավորությունների գնահատում: Մարդը պետք է ունենա (տրամաբանական) մտածողություն, հասկանա մաթեմատիկական ապացույցները:

4. **Թվային տեխնոլոգիաներին տիրապետելու կարողություն**

Սա պահանջում է տեղեկատվական տեխնոլոգիաների (ՏՏ)ստեղծագործական կիրառում հաղորդակցման, աշխատանքի կամ առօրյա գործունեության մեջ: Այն ներառում է ՏՏ-ի
կիրառման հիմնական հմտություններ՝ համակարգչից օգտվելու (տեղեկատվության ստացման, գնահատման, պահպանման, փոխանակման համար), ինչպես նաեւ համացանցի կիրառում: Անձը պետք է տիրապետի ՏՏ-ի որոշակի հմտությունների, որոնցանհրաժեշտությունը կարող է առաջանալ ինչպես առօրյայում,այնպես էլ աշխատանքի ընթացքում: Այս կարողությունը իր մեջներառում է նաեւ ձեռք բերված

տեղեկատվության պահպանման հասանելիությունն ու անվտանգությունը: Բացի համակարգչից՝
անհրաժեշտ է նաեւ տիրապետել թվային այլ տեխնոլոգիաների կիրառման տարրական հմտությունների, օգտվել ժամանակակից կենցաղային և թվայնացված տեխնիկական միջոցներից:

5. **Սովորել սովորել**

Վերը նշված կարողությունը ապահովվում է անձի կրթությամբ: Անձը պետք է կարողանա ինքնուրույն կազմակերպել եւ իրականացնել իր կրթությունը՝ (անհատական կամ խմբային) սեփական պահանջմունքներին, կարողություններին եւ հնարավորություններին համապատասխան: Այս կարողությունը պահանջում է որակյալ կրթություն ստանալու համար հնարավոր խոչընդոտների հաղթահարում: Կրթության ընթացքում անձը պետք է ձեռք բերի
անհրաժեշտ գիտելիքներ եւ կարողություններ, որոնք հետագայում նրան հնարավորություն կտան ապահովելու իր զբաղվածությունը: Սովորելու ընթացքում անձը պետք է նաեւ ձեռք բերի այնպիսի հմտություններ, որոնք կիրառելի կլինեն առօրյայում: Այս կարողությունը անձից պահանջում է նախընտրելի կրթական ռազմավարության մշակում, որն էլ հիմնված է անհատի ուժեղ եւ թույլ կողմերի իմացության եւ դրան համապատասխան կրթական
հնարավորությունների գնահատման վրա: Սակայն, սա պահանջում է այնպիսի կարողություններ, ինչպիսիք են հաղորդակցումը, տարրական մաթեմատիկական կարողությունները եւ ՏՏ-ի կիրառումը՝ հետագա կրթությունը կազմակերպելու եւ շարունակելու համար: Ավելի ընդհանրացված ձեւակերպմամբ՝ այս կարողությունը մեծապես նպաստում է սեփական կարիերայի ուղղորդմանն ու կառավարմանը, օգնում սովորել՝ ինչպես գտնել եւ արդյունավետ կերպով օգտագործել տեղեկատվությունը:

6. **Հասարակական եւ քաղաքացիական կարողություններ**

Հասարակական եւ քաղաքացիական կարողությունները առընչվում են միջանձնային, միջմշակութային փոխհարաբերություններին՝ ներառելով վարքային առանձնահատկությունները: Դրանց տիրապետումը մարդուն հնարավորություն է տալիս
ադեկվատ վարք դրսեւորել աշխատանքային միջավայրում և առօրյայում՝ խուսափելով կոնֆլիկտներից: Քաղաքացիական կարողությունը անհատի՝

քաղաքացիական կյանքում ակտիվ ընդգրկվածությունն ու մասնակցությունն է: Հասարակական կարողությունն առնչվում է անհատի բարեկեցությանը, որն էլ իր մեջ ներառում է մարդու ֆիզիկական եւ հոգեկան առողջությունը: Միջանձնային հարաբերություններում դրական փոխազդեցութ-
յունը պայմանավորված է տարբեր ազգերի մշակութային, վարքային առանձնահատկությունների իմացությամբ եւ միջմշակութային փոխհարաբերություններում՝ դրանց ճիշտ կիրառմամբ: Քաղաքացիական կարողությունները մարդու իրավունքների և
պարտականությունների, ինչպես նաեւ սեփական եւ այլ երկրների միջեւ առկա տարբերությունների իմացությունն է: Այն ներառում է ներքին եւ միջազգային հարաբերությունների մասին ընդհանուր պատկերացում, պատմական իրադարձությունների իմացություն:Անձը պետք է կարողանա շփվել տարբեր ազգերի ներկայացուցիչների հետ, հարաբերություններում լինել կառուցողական, ստեղծագործ եւ որոշումներ կայացնող:
Քաղաքացիական կարողությունը ներառում է ըմբռնողականություն տարբեր ազգերի մշակութային, քաղաքական, կրոնական դիրքորոշումների, արժեքային համակարգի նկատմամբ: Այն պահանջում է աշխարհի ընկալումը որպես մեկ ամբողջականություն և պատրաստակամությունը՝ աջակցելու տարբեր ազգերի ներկայացուցիչներին:

7. **Ձեռներեցություն**

Ձեռներեցության կարողությունն ուղղված է անձի գաղափարների, մտահղացումների եւ շարունակական գործողությունների արդյունավետ իրականացմանը: Այն ներառում է ստեղծագոր ծական աշխատանք, նորարարություն եւ ռիսկ, ինչպես նաև նպատակի հասնելու համար անհրաժեշտ ծրագրի կազմում և ղեկավարում: Այն վերաբերում է ոչ միայն անձնական
նախաձեռնություններին, այլև աշխատանքային գործընթացում նախաձեռնողականության ցուցաբերմանը, ինչպես նաեւ նոր գիտելիքների, կարողությունների եւ հմտությունների ձեռքբերման հիմք է: Ձեռներեցության կարողության համար անհրաժեշտ է թիմային աշխատանք՝ համագործակցություն ծանոթ եւ անծանոթ անձանց հետ, որոշումների կայացում՝ պատասխանատվություն կրում վերջիններիս համար:
Ձեռներեցությունը պայմանավորված է անձի կողմից փոփոխություն կատարելու ձգտմամբ: Ձեռներեցությունն անձի մեջ ձևավորում է ինքնուրույնություն,

պատասխանատվության զգացում եւ նախաձեռնողականություն առօրյայում եւ աշխատավայրում, ինչպես նաեւ նպատակին հասնելու վճռականություն եւ մոտիվացիա:

8. **Մշակութային իրազեկվածություն եւ ինքնադրսևորում**

Յուրաքանչյուր անձ, անկախ իր մասնագիտական գործունեության ոլորտից, պետք է պատկերացում ունենա արվեստի, գրականության եւ երաժշտության մասին: Մշակութային իրազեկվածությունը ներառում է գիտելիքներ ազգային եւ համաշխարհային մշակութային ժառանգության վերաբերյալ: Անհրաժեշտ է նաեւ տեղեկացված լինել ժամանակակից մշակութային արժեքների մասին: Այն նաեւ մեծ հնարավորություն է ընձեռում լինել ավելի ստեղծագործ, ընդլայնել մտահորիզոնը եւ վերլուծական մտածողությունը: Նույնականացումը սեփական մշակույթի հետ եւ դրա գիտակցումը ձեւավորում է հարգանք, հայրենասիրություն, բարեկիրթ վարք եւ կայուն արժեհամակարգ: Բացի այդ՝ մշակութային իրազեկվածությունը նպաստում է մարդու ինտեգրմանը: Այս հիմնական կարողությունները աշխատաշուկայում անձին դարձնում են առավել մրցունակ: Բոլոր կարողությունների ձեռքբերումը պայմանավորված է նաեւ ինքնազարգացմամբ: Այս ամենին կարելի է ավելացնել ինքնադրսեւորման կարողությունը, քանի որ, այդ կարողություններին տիրապետելուց զատ, անձը պետք է կարողանա ճիշտ եւ լիարժեք ներկայացնել իր <<ես>>-ը:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Սովորաբար, ավագ դպրոց ընդունվողները, ըստ կողմնորոշվածության, բաժանվում են երեք խմբի՝

1) ամբողջովին կողմնորոշվածներ,

2) մասնակի կողմնորոշվածներ,

3) չկողմնորոշվածներ:

Անշուշտ, ցանկալի կլիներ, որ հիմնական դպրոցում ուսանելու տարիներին աշակերտը նաև կողմնորոշված լինի իր ապագա մասնագիտության ընտրության ուղղությամբ, սակայն արդեն մի քանի տարվա ավագ դպրոց դիմողներից շատերը վերը նշված 2-րդ խմբի ներկայացուցիչներ են: Սփոփիչն այն է, որ հետագայում սովորողն արդեն ուսուցման ընթացքում կարող է փոխել իր ընտրած հոսքը կամ ենթահոսքը: Գործնականում նույնպես այսպիսի փոփոխությունների դեպքեր լինում են, սակայն նման պարագայում ոչ միշտ են փոփոխությունները արդարացված լինում, եւ հաճախ նման քայլի դիմած աշակերտների ուսման որակը բարձրանալու փոխարեն ընկնում է: Սա էլ է հասկանալի. մեկ ու կես տարի հումանիտար հոսքում սովորած սովորողը լուրջ դժվարությունների է հանդիպում բնագիտամաթեմատիկական հոսքում, երբ ուսուցանվող խորացված ծրագրով առարկաների՝ երբեմն արմատական փոփոխությունների է հանդիպում:

Մասնագիտական կողմնորոշման ուղղությամբ շատ կարևոր է <<դպրոց-բուհ>> համակարգի ձեւավորումը,դրա համար իրականացնում ենք մինչբուհական այցելությունները բուհեր՝ լաբորատոր աշխատանքների, դասախոսների հետ զրույցների, էքսկուրսիաների, դասախոսություններին մասնակցության և այլ միջոցառումներ, ինչն անշուշտ, օգնում է սովորողներին ադապտացվելու նաև բուհական կյանքին: Վերջապես, շատ կարեւոր են արտաուսումնական՝ արտադասարանական, արտադպրոցական միջոցառումները:

10-12 դասարանների սովորողներ շրջանում իրականացված աշխատանքների և հարցումների արդյունքում ստացել եմ հետևյալ արդյունքը:



ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ուսուցչի դերը մեծ է սովորողների մասնագիտության գիտակցված ընտրությանն ու ինքնազարգացման հարցում: Ուսուցիչը օգնում է սովորողներին ուսումնասիրել իրենց հետաքրքրությունները, պլանավորել կարիերայի հետ կապված դրական փորձառությունները և գործողությունների նախագծման մեթոդի օգնությամբ յուրաքանչյուր տարիքային փուլին համապատասխան կատարել գիտակցված և նպատակային որոշում:

Ուսուցչի աշխատանքները մասնագիտական կողմնորոշման հարցում հնարավորություն է տալիս արժեքների համակարգում կարևորել մասնագիտական պիտանելիության գաղափարախոսությունը, առողջ քննարկումները, ուսումնական հաստատությունների հնարավորությունների առավելությունները, ինչպես նաև միջանձնային փոխհարաբերություններում մասնագետների նկապմամբ դրական վերաբերմունք, հավասարությունը:

Ուսուցիչն իր փորձով նպաստում է սովորողների դիրքորոշումների ձևավորմանը,օգնում է սահմանել կարիերայի դժվարին, բայց իրագործելի նպատակներ, պատասխանատություն կրել սեփական որոշումների կայացման գործում և շարունակել աշխատաշուկայի մարտահրավերներին համապատասխան հմտությունների զարգացումը:

Ճանաչողական այցերի, էքսկուրսիաների և տարբեր թեստերի միջոցով է բացահայտվում և սովորողի կողմից ճանաչվում են ոլորտային մասնագիտությունները՝ ուսումնասիրելով անհրաժեշտ ռեսուրսները՝ համադրելով սեփական հնարավորությունների հետ:

Վերջնարդյունքը հիմնակնում լինում է այն ,որ սովորողը մասնագիտության ընտրություն և կարիերայի պլանավորման գործընթացի մարտահրավերը իրագործում է ողջ կյանքի ընթացքում, կարողանում է արագորեն, նպատակային, գիտակցված ընտրել նոր մարտահրավերներ և շարժվել ժամանակին և իրավիճակին համապատասխան:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Գեւորգյան Հ., Կարիերան ավելին է, քան զուտ աշխատանք:Կարիերայի ուղղորդման ոլորտում աշխատող մասնագետներիհամար: -Եր., Բրիտանական դեսպանատուն / Բրիտանականխորհուրդ, 2011: -84 էջ:
2. Դաստիարակչական աշխատանքները դպրոցում, մասնագիտական կողմնորոշման խնդիրներ: -Եր., ՀՀ ԿԳՆ, Կրթության ազգային ինստիտուտ, 2010:
3. Կարիերայի ուղղորդման հիմնախնդիրներն ու զարգացման միտումները: Միջազգային գիտական կոնֆերանսի հոդվածների ժողովածու /ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի
նախարարություն: -Եր., §Զանգակ-97¦ հրատ., 2014. -208 էջ:
4. Մասնագիտական կողմնորոշման նյութերի ժողովածու ուսուցիչների համար (8-12-րդ դասարաններ): -Եր., 2017:
5. Մեթոդական ուղեցույց մեծահասակների մասնագիտական կողմնորոշման եւ կարիերայի ուղղորդման: ՀՀ ԱՍՀՆ, ՄԿՄԿ:-Եր., 2016:
6. Ուղեցույց հանրակրթական ուսումնական հաստատություններում մասնագիտական կողմնորոշման: ՀՀ ԱՍՀՆ, ՄԿՄԿ: -Եր.,2016:
7. Гудкова Е.В., Основы профориентации и профессионального консультирования: Учебное пособие/ Под ред. Е.Л. Солдатовой.– Челябинск: Изд-во ЮУрГУ, 2004. – 125 с. (էջ 4-19)
8. Никитина Н.И., Глухова М.Ф., Методика и технология работы социального педагога. –М.: Гуманитар. изд. центр ВЛАДОС,2007. -399с.
9. Организация профориентационной работы в школе: Сборник инструктивно-методических материалов. – Биробиджан: ОблИПКПР, 2011. – 28 с.
10. Пряжникова Е.Ю., Профориентация: учеб. пособие для студ.учреждений высш. проф. образования / Е.Ю.Пряжникова,Н.С.Пряжников. — 6-е изд., стер. — М.: Издательский центр
«Академия», 2013. — 496 с.
11. Пчелина И.В., Дьяченко В.Г., Профессиональная ориентация в подготовке врачей (учебно-методическое пособие). Хабаровск: Издательский центр ДВГМУ, 2004. – 145 с.